ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Բիոլ. և գյուղատնտ. գիտություններ IX, № 5, 1956 Биол. и сельхоз. науки

ՀԱՄԱՌՈՏ ԳԻՏԱԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Ս. Մ. ՍԱՐԳՍՅԱՆ

ԲՈՒՅԺԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ ՈՒՂԻՆԵՐԸ ՎԵՑԵՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱԿՈՒՄ

Սովետական Միության Կոմունիստական պարտիայի 20-րդ համագումարը քննարկել և հաստատել է մեր երկրի ժողովրդական տնտեսության զարգացման վեցերորդ հնգամյա պլանը։ Նախատեսվում է զգալի չափերով ավելացնել արդյունաբերական արտադրանքը, ինչպես նաև գյուղատնտեսական մթերքների արտադրությունը։ Կբարձրանա սովետական ժողովրդի կուլտուրական սպասարկումը, կավելանան աշխատավորության նյութական միջոցները։ Այդ բոլորի հետ միասին, բնականաբար կբարձրանա բնակչության պահանջմունքը, մետաքսյա շքեղ, հիգիենիկ և դիմացկուն հագուստեղենի, ինչպես և մետաքսյա այլ իրերի նկատմամբ։ Կավելանա նույնպես մետաքս օգտագործող արդյունաբերության ճյուղերի պահանջը այդ արժեքավոր հումքի նկատմամբ։

Բնական մետաքսի նկատմամբ բնակչության ու մետաքս սպառող արդյունաբերության պահանջը լրիվ բավարարելու նպատակով, վեցերորդ հնգամյա պլանով նախատեսվում է զգալիորեն ավելացնել բոժոժի արտադրությունը։

Մասնավորապես, մեր ռեսպուբլիկայի շերամապահների առջև խնդիր է դրված հետագա հինգ տարիների ընթացքում բոժոժի արտադրությունն ավելացնել 1.8 անգամ։

Այժմ, դիմավորելով հնգամյակի առաջին տարվա շերամապահական սեզոնը, անհրաժեշտ է երևան բերել ունեցած հնարավորությունները և մշակել դրված խնդրի հաջող ու արագ լուծման ռացիոնալ ուղիները։

Այդ կապակցությամբ ավելորդ չէր լինի ծանոթանալ ռեսպուբլիկայի շերամապահության վիճակին վերջին տարիներում, նպատակ ունենալով երևան բերել նրա դրական կողմերն ու թերությունները։

Վերջին տարիների ընթացքում ռեսպուբլիկայում նկատվել է շերամի որդակերակրումների ծավալի որոշ ընդլայնում։ Հայտնի է, որ արտադրության ծավալի ընդլայնումը արտադրանքի ավելացման ուղիներից մեկն է։ Սակայն անցած տարիների արդյունքների ամփոփումը ցույց է տալիս, որ շերամապահության բնագավառում արտադրության ծավալի ընդլայնումը չի զուգակցվել արտադրանքի ավելացման հետ։

Ինչպես պարզ երևում է բերված կորագծից, եթե շերամապահության 1950 թվականի հիմնական ցուցանիշների (արտադրության ծավալն ու մեկ միավորից ստացվող բերքը) համարենք 100%, ապա հետագա 6 տարում արտադրության ծավալն ընդլայնվել է որոշ տարիներ մինչև 23%-ով, իսկ 1955 թվականին՝ 12%-ով։ Իրա հետ միասին, ինչպես այդ երևում է կորագծից, կերակրվող որդերի մեկ միավորից ստացվող բերքը համապատասխանորեն իջել է որոշ տարիներ 19%-ով, իսկ 1955 թվականին՝ 12%-ով։



Կորագիծ 1.

Շերամապահության այդպիսի կազմակերպման հետևանքով բոժոժի արտադրությունը վերջին 6 տարվա ընթացքում ոչ միայն չի ավելացել, այլև հետզհետե նվազել է, որի հետևանքով 1955 թվականին ռեսպուբլիկայում արտադրվել է ավելի քիչ բոժոժ, քան 1950 թվականին։

Եթե նկատի ունենանք, որ վերջին տարիներում այդ ընագավառի աշխատատար պրոցեսներում, թթադործության և որդակերակրումների գործում էական փոփոխություններ չեն կատարվել արտադրական պրոցեսների մեքենայացման ուղղությամբ, այդ նշանակում է, որ մեր ռեսպուբլիկայում վերջին 6 տարում համապատասխանորեն իջել է որդակերակրումների մթերատվությունը և աշխատանքի արտադրողականությունը։ Մինչդեռ պարտիան ու կառավարությունը, պլանավորելով գյուղատնտեսության այս կամ այն ընագավառի արտադրանքի բարձրացումը, միաժամանակ նշում են, որ այդ խնդրի իրագործումը պետք է ընթանա թե՛ արտադրության ընդլայնման և թե՛ արտադրողականության բարձրացման ուղղությամբ։

Այս բոլորից հետո անդին կլիներ հարցնել՝ մթոք կա՞ արդյոք ընկնել որդակերակրումների ընդլայնման խարուսիկ հաջողության հետևից, զոհաբերելով էականը՝ արտադրանքի մակարդակի ու աշխատանքի արտադրողականության բարձրացումը։

Սակայն սխալ կլիներ մտածել, որ անցյալ տարիների փորձի վերլուծումը հիմք է ծառայում բոժոժի արտադրության ավելացման խնդրի լուծումը լիովին անջատելու որդակերակրումների ծավալի ընդլայնման անհրաժեշտությունից։

Մեր գիտելիքներն ու շերամի բուծման մեթոդները ունակ հնարավորություն են ընձեռում առանց որդակերակրումների ծավալի ընդլայնման, որդակերակրումների բերքատվությունը բարձրացնելու միջոցով զգալիորեն ավելացնելու բոժոժի արտադրությունը։

Օրինակ, հայտնի է, որ ռեսպուբլիկայի այն շրջաններում, որտեղ տարվում են ցեղացու կերակրումներ, բոժոժի բերքը մեկ տուփից հասնում է 70 և ավելի կգ-ի։ Եթե ռեսպուբլիկայում տարվող կերակրումների բերքատվությունը բարձրացնենք և հասցնենք այն շրջանների ցեղացու կերակրումների մակարդակին, որը պետք է ասել, դեռևս ամենաբարձրը չէ, ապա բոժոժի ընդհանուր արտադրանքը ռեսպուբլիկայում կավելանա մոտ 40%-ով։

Պետք է ուղղակի ասել, որ մեր ռեսպուբլիկայում բոժոժի արտադրության ավելացման ռեալ ուղիներից մեկը հենց որդակերակրումների բերքատվության բարձրացումն է։

Հայաստանը շերամապահական հնագույն երկիր է։ Մեր շերամապահները, հիմնականում, տիրապետում են որդակերակրումների տեխնիկային։ Նրանցից շատերը ռեկորդային հաջողություններ են ձեռք բերել բոժոժի բերք ստանալու գործում, որի համար արժանացել են Սոցիալիստական Աշխատանքի Հերոսի կոչման և պարգևատրվել են շքանշաններով։ Սակայն ինչն է խանգարում բոժոժի բերքի բարձրացմանը։

Մեր տրամադրության տակ եղած տվյալների վերլուծումը ցույց է տալիս, որ շերամապահական հիմնական շրջաններում որդակերակրումների բերքատվության բարձրացումը սերտորեն կապված է որդակերակրումների ծավալի ու կերի բազայի անհամապատասխանության հետ։

Մեր այդ եզրակացությունը հիմնավորելու նպատակով ծանոթանանք ռեսպուբլիկայի շերամապահական 3 հիմնական շրջանների (Մեղրու, Ղափանի և Արտաշատի) որդակերակրումների ցուցանիշներն՝ վերջին 6 տարվա օրինակի վրա։

Շրջանի անունը	Ցուցանիշները	Տարիներ					
		1950	1951	1952	1953	1954	1955
Մեղրի	Կերակրումների ծավալը	525	545	524	600	611	620
	Բերքատվությունը	71,7	71,7	75,9	71,4	74,2	75,6
Ղափան	Կերակրումների ծավալը	560	565	550	556,5	565	532
	Բերքատվությունը	46,3	44,2	41	38,2	42,2	41,1
Արտաշատ	Կերակրումների ծավալը	320	339,5	454	450	490	423
	Բերքատվությունը	55,2	49,6	43,4	36,4	31	34,4

Ինչպես պարզ երևում է աղյուսակում բերված տվյալներից, Մեղրու շրջանը 6 տարվա ընթացքում ոչ միայն ընդլայնել է որդակերակրումների ծավալը, այլև բարձրացրել է կերակրումների բերքատվությունը։ Պետք է խոստովանել, որ դա գովելի աշխատանքի արդյունք է։

Ղափանի շերամապահները փոքրացրել են և արտադրության ծավալը, և՛ կերակրումների բերքատվությունը, իսկ Արտաշատի շրջանում տարեցտարի ընդլայնվել է արտադրության ծավալը և կատաստրոֆիկ կերպով իջել է բերքատվությունը։

Մենք չենք կարող շերամապահության ցուցանիշների իջեցման հիմնական պատճառը որոնել ապրո-զոոկանոնների ճիշտ չկատարելու մեջ, քանի որ 6 տարվա կերակրումների փորձը պետք է որ շերամապահներին ստիպեցներ ավելի լավ կերակրել։

Ղափանի և Արտաշատի շրջաններում որդակերակրումների բերքատվության սիստեմատիկ նվազման պատճառը կարելի էր վերագրել կերի բազայի անբավարար լինելուն։ Եվ իրոք, եթե համեմատելու լինենք այդ 3 շրջանների կերի բազայի ռեալ պոտենցիալները*, ապա կստանանք հետևյալ պատկերը։ Մեղրու շրջանում մեկ տուփ կերակրումներին ընկնում է 2,5, Արտաշատում՝ 0,97, իսկ Ղափանում՝ 0,96 պայմանական միավոր։

Այդ տվյալները հիմք են ծառայում ասելու, որ իրոք, Ղափանի ու Արտաշատի շրջաններում ջերմատպարության այսպիսի անմխիթար վիճակը, բացի մյուս պատճառներից, պետք է բացատրել, հիմնականում, կերային անբավարար բազայով։

Ինչպես արդեն ասվեց, որդակերակրումների բերքատվության բարձրացումը, արտադրության ներկա ծավալի պայմաններում, չի կարող ապահովել մեր առջև դրված խնդրի լրիվ լուծումը։ Պահանջվում է հնարավոր հինգ տարիների ընթացքում ընդլայնել նաև որդակերակրումների ծավալը, որի իրագործումը սերտորեն կապված է կերի արտադրության ավելացման հետ։

Այս կապակցությամբ հարց է ծագում՝ ինչքան կեր կարող է արտադրվել ռեսպուբլիկայում, եթե ապահովվի մեր ունեցած թթաստանների ու հատատունկ թթենիների տերևի միջին բերքատվությունը։

Եղած տվյալները ցույց են տալիս, որ այժմ գոյություն ունեցող թթենիների ճիշտ շահագործման, տերևի ռացիոնալ օգտագործման ու կերակրումների ծավալի ճշտված պլանավորման դեպքում ռեսպուբլիկան ի վիճակի է կերով բավարարելու կերակրումների 1955 թվականի ծավալը և նույնիսկ որոշ պայմաններում ընդլայնելու այն, առանց բերքատվության իջեցման, իսկ թթաստանների ու հատատունկ թթենիների մշակության բարելավման ու շահագործման որոշ միջոցառումների կիրառման շնորհիվ 1960 թվականին ռեսպուբլիկայում կարելի կլինի ընդլայնել որդակերակրումների ծավալը ավելի քան 2 անգամ և զգալիորեն բարձրացնել կերակրումների բերքատվությունը։

Որոնք են կերի բազայի բարելավման ու կերի ռացիոնալ օգտագործման միջոցառումները՝

1. Ռեսպուբլիկայում, որդակերակրումների համար օգտագործվող թթենիների գերակշռող մեծամասնությունը պատկանում է ցածրարերք տեսակներին։ Այժմ սովետական թթագործները ստեղծել և բազմացրել են թթենու բարձրարերք սորտեր, որոնք ունեն նաև բարձր կերային արժեք։ Անհրաժեշտ է մոտակա 3—4 տարվա ընթացքում ռեսպուբլիկայում կերի ամբողջ բազան վերապատվաստել «Դրուզիա» կամ «Մուսական» սորտերով։ Այդ միջոցառումը, որի արագ կիրառման դեպքում ոչ միայն չի իջնի ինչպես մտածում են ոմանք, այլև կավելանա կերի արտադրանքը, հնդամյակի Փ-րդ ու Հ-րդ տարիներում բազայի նորմալ մշակության պայմաններում առնվազն կկրկնապատկվի կերի ֆոնդը և վճռական խթան կարող է հանդիսանալ բոժոժի արտադրությունը և աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու գործում։

---

* Կերի պոտենցիալը կազմվել է վերջին (1950 թ.) վիճակագրական տվյալների հիման վրա։

Այդ աշխատանքները կազմակերպելու և իրագործելու համար ռեսպուբլիկայում արդեն ստեղծված են թթենու բարձրարերք սորտերի աղբյուրներ, որոնք լիովին կարող են բավարարել դոյություն ունեցող թթենիների արտակարգ բարելավման պահանջը։

2. Այժմ շահագործվող և աճեցվող սորտային թթենիներն անհրաժեշտ է վերաձևավորել, նրանց սաղարթները դարձնելով բազմաբոլունք։

Հայտնի է, որ որդակերակրումների համար օգտագործվող թթենիների մեծ մասը ճիշտ չի ձևավորված, դեռևս անբավարար է նրանց շահագործման վիճակը։ Մինչդեռ ապացուցված է, որ թթենիների ճիշտ ձևավորումը, մասնավորապես բազմաբոլունք բույսերի ստեղծումը, ավելի քան կիսով չափ կարող է բարձրացնել տերևատվությունը։

3. Անհրաժեշտ է բարելավել թթաստանների ու հատատունկ թթենիների մշակությունը։ Թթաստանների ու հատատունկ թթենիների բնամերձ տարածության հողի փիրեցումը, ժամանակին ջրելը և պարարտացնելը կարող են կրկնապատկել բույսի տերևատվությունը և որ ամենագլխավորն է, զգալիորեն բարձրացնել տերևի կերային արժեքը։

4. Վերջապես, կարևոր նշանակություն է ձեռք բերում որդակերակրումների ժամանակ տերևի ռացիոնալ ու տնտեսաբար օգտագործումը։

Բազմաթիվ դիտողությունները ցույց են տվել, որ շատ տեղերում դեռևս ճիշտ չեն օգտագործվում եղած կերային հնարավորությունները։ Վաղ գարնանը, որդերի մատղաշ հասակներին կերակրելու ժամանակ պետք է ձգտել առաջին հերթին լրիվ օգտագործել հատատունկ, ճանապարհների եզրերին կամ մշակությունից դուրս մնացած վայրի թթենիների տերևները։ Հայտնի է, որ այդպիսի բույսերի տերևները շուտ են կորցնում իրենց կերային արժեքը և եթե կերակրումների սկզբում նրանք չեն շահագործվում, ապա տվյալ տեղանում անօգտագործելի են դառնում որդակերակրումների համար։

Շատերը մտածում են, թե որդի մատղաշ հասակներում տերևի չնչին քանակություն է օգտագործվում և իբր այդ ժամանակ տերևի շռայլումը չի կարող զգալիորեն անդրադառնալ կերի ընդհանուր բալանսի վրա։ Մինչդեռ այդ կարծիքը հիմնովին սխալ է։ Որդի մատղաշ հասակների ժամանակ տնտեսված տերևը որդի զարգացման վերջին պահին աճած է լինում մոտ 50 անգամ և կարող է զգալի չափով լրացնել կերի պահանջը որդերի զարգացման վերջին վճռական շրջանում։

Փորձնական տվյալները թույլ են տալիս ասելու, որ որդի մատղաշ հասակների ժամանակ տնտեսված յուրաքանչյուր 1 կգ սորտային տերևը, որդերի զարգացման վերջին հասակներում տերևի պահանջը լրացնելու նպատակով օգտագործելու դեպքում, մոտ 4 կգ-ով կարող է ավելացնել բոժոժի բերքը։

Կարևոր նշանակություն ունի տերևի մթերումն ու թարմ վիճակում նրա պահպանումը, որի խախտումը հաճախ տերևի զգալի կորուստի պատճառ է լինում։

Ներամապահության բերքատվության բարձրացման մյուս կարևոր խնդիրը՝ դա որդակերակրումների տեխնիկայի կատարելագործումն է ու կերակրվող նյութի ցեղայնության բարձրացումը։

Մինչև վերջին տարիները հանրապետությունում կերակրվող շերամի ցեղերը ու նրանց հիբրիդները (բաղդատ, ասկոլի) այժմ պետք է լրիվ փոխարինվեն նոր սպիտակաթել ցեղերով, որոնց բերքատվությունը մոտ մի քառորդով գերազանցում է անցյալում բուծված ցեղերի բերքատվությունից։ Եթե մեկ կգ մետաքսանյութ ստանալու համար ծախսվում էր 11 կգ բաղդատի կամ ասկոլու բոժոժի բերք (կենդանի բոժոժի հաշվով), ապա այդքան մետաքսաթել ստանալու համար ծախսվում է միայն 8 կգ սպիտակաթել ցեղերի բոժոժ։ Այստեղից հասկանալի է, որ բոժոժի արտադրության նույն պայմաններում, սպիտակաթել ցեղերի բուծումից մոտ 25—30%-ով ավելի մետաքսանյութ է ստացվում։

Վերջապես, որդակերակրումների արտադրական պրոցեսի կրճատման, կերակրումները կլիմայական անբարենպաստ պայմանների փրկելու և բանվորական ուժի ծախսի տնտեսման հարցերի հաջող լուծմանը կարելի է հասնել արտադրության մեջ որդակերակրումների արագընթաց մեթոդի լայն արմատավորման շնորհիվ։

Այդ մեթոդով կերակրելու դեպքում որդակերակրումներն ավարտվում են 10—15 օր ավելի շուտ, իսկ բոժոժի բերքը, ինչպես այդ ցույց են տալիս մեր հանրապետությունում և այլ շերամապահական վայրերում տարված արտադրական փորձերը, ոչ միայն չի իջնում, այլև բարձրանում է։

Շերամապահության բնագավառում եղած վերոհիշյալ ռեալ հնարավորությունների օգտագործումը հնարավորություն կտա ոչ միայն կատարել, այլև գերակատարել բոժոժի նախատեսված պլանը մեր հանրապետությունում։

Շերամապահական շրջաններում ու կոլտնտեսություններում այդ հնարավորությունների հայտնաբերումն ու լիարժեք օգտագործումը պետք է դառնա հանրապետության Գյուղատնտեսության ministրության համապատասխան օրգանների ու գիտական հիմնարկությունների գործունեության առանցքը բոժոժի արտադրության հնգամյա պլանի կատարման հարցում։